նաց՝ բայց վերջիններս կը հակառակին անոր. լուսարարը կը դիմէ Ս. Յարութեան մօտ բնակող Շէյխ Մէֆա անուն մէկուն՝ որուն մօտ դանապան կ'ըլլայ, և կտակ կ'ընէ որ երբ մեռնի Շէյխ Մէֆան իր մօտ գտնուած Կենաց Փայտի մասունքը յանձնէ Հայոց վանքին. կը վախճանի յիշեալը և Շէյխ Մէֆա նոյն մասունքը կը բերէ կը յանձնէ Եղիազար պատրիարքին։ Մատուռը իբր մէկ մէթր լայնք, ու մէկուքառորդ մէթր երկայնք ունի, շուրջանակի չինիով պատած. յատակը աւագ խորանի բեմին պէս երփներանգ մարմարներով արուեստագործուած։ Մատուռին երեսը բաց է մայր տաճարին վրայ, և այնտեղ կայ արուեստագործ և ոսկեզօծ պատշգամ մը։

Ս. Նշանի մատուռէն դուրս բացօթեայ պզտիկ բակ մը կայ որուն վրայ կը բացուի Ս. Առաքելոց մատուռը, կոկիկ փոքր եկեղեցի մը 25 քառակուսի մէթր տարածութեամբ, ուր կը պահուին Շղթայակիրի և Կոլոտի ուսուցիչ Բաղիշեցի Վարդան վարդապետի պատկերները և ուրիշներ։ Այս եկեղեցիի մասին Հաննէ վրդ. իր Պատմութեան մէջ (էջ 91) հետեւեալ տողերը կը գրէ. «... եւ ի հնագոյն եւ սագաշին. որպէս եւ յուեալ եմ թէ ընդ մեծի եկեղեցւոյն շինեցաւ յատուկ աղօթարան թագաւորաց, զի դուռն ի տանեաց է, եւ այժմ ի գրքատուն։ Նորոգեալ ի մեծ Վարդապետին ի ՌՃՀԳ (= 1734) թուին»։ Ս. Առաքելոց բակին քովը և քիչ մը բարձր երկրորդ փոքրիկ բակ մըն ալ կայ, որուն վրայ կը բացուի Հանրարձման մատուռը, երկայնքը մէկ ու քառորդ, իսկ լայնքը երեքուկէս մէթր սեղանով մը։

Ս. Յակոբայ տաճարին աւագ դրան երկու կողմերը մանր խորշերու մէջ երկու սեղաններ կան Ս. Գէորգայ զօրավարին եւ Ս. Նիկողայոսի հայրապետին, պղնձէ վանդակներով փակուած։ Կը թուի որ Ս. Նիկողայոսինը աւելի ուշ շինուած է քանի որ չի յիշուիր հիններէն։ Աւանդութիւն է թէ երբ Սալահէտտին 1187–1194 եօթը տարիներու մէջ Կնիքի ներքեւ պահեց Ս. Յակոբի տաճարին մուտքը, Միաբանութիւնը արտաքին գաւիթին մէջ և այս սեղաններուն առջև կատարած է սրբազան պաշտամունքը։ Հաննէ վրդ.՝ իր Պատմութեան մէջ (էջ 80–87) Սալահէտտինի կողմէն Ս. Յակոբայ տաճարին գրաւման և վերստին Հայոց շնորհման մասին կը պատմէ յատկանշական զրոյց մը, իսկ Թադէոս Միհրդատեանց իր Դատաւորութիւն Դատաւորութեանց գիրքին մէջ